այսչափն ալ շատ է հասկցողին ։ Իսկ կը հարցընենք՝ թէ ատ հարցմունքը մեզի ընողը՝ հակառակ կարծիքէն ինչ փաստեր ու ցուցմունքներ տեսեր է որ մեզմէ ալ կը պահանջէ ։ Լեզուի ամէն մէկ բանը անանկ շատ պատճառներով ու փաստերով ամենուն ցուցընելու չգար , ու հարկ ալ չէ ․ ազգին ականջն ու ախորժակն է անոր 'ի բնէ դատաւորը ․ ազգը կը դատէ ։

Հ․ ԱՐՍ․ Բ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սէնկափուր ։

ՍԻՆԿԱՓՈՒՐ քաղաքը ասկէ տասներեօթը տարի առաջ գրեթէ նորէն շինեցին Անգղիացիք արեւելեան Հնդկաստանի ծայրը՝ Սինկափուրի նեղուց բուսած տեղը ։ Աս քաղաքը որովհետեւ մօտ է Սումատրա, Ճաւա, Պօրնէօյ կղզիներուն և Հնդկաց արշիպեղագոսին ուրիշ կղզիներուն , ու դիմացէն կ'անցնին Հնդկաստանէն ու Եւրոպայէն Չին գնացող նաւերը , իրեն դիրքը վաճառականութեան խիստ յարմար ընկած է ։ Վաճառականութիւնը ազատ է հոն ու ամենեւին տուրք չունի ․ աս պատճառաւ քիչ ատենի մէջ շատ առաջ գնաց ․ 1819ին հազիւ թէ քանի մը Մալեզիացի ձկնորսներու տնակներ կային հոն , ու գրեթէ աւազակներու բնակարան էր ․ իսկ հիմա շատ մեծ քաղաք մը ձեւացած է՝ որ գրեթէ 40,000 բնակիչ ունի ։

Ամէն ազգէ վաճառականներ կը գտնուին մէջը ․ այսինքն Հայ , Չինացի , Արաբացի , Հնդիկ ու Անգ-

ղիացի ։ Ամէն տարի գրեթէ 40 միլիոն ֆրանքի վաճառք կը մտնէ աս քաղաքը, նոյնչափ ալ դուրս կ'ելլէ անկէ ։ Գրեթէ ամէն օր աշխարհքիս ամէն կողմէն նաւ կուգայ հոն ։ Բընակիչներուն երրորդ մասը Չինացի են, վեցերորդ մասը Մալէզիացի, մնացածները Անգղիացի, Հայ, Հընդիկ, Փորթուգալցի, Հրեայ, Արաբացի, Կորոմանտէլցի, Ճաւացի, Սիամացի և Պարսիկ ։

Տներն ալ շատցան ժողովրդեան բազմութեանը համեմատ. ասանկով Սինկափուրը գեղեցիկ քաղաք մը դարձաւ, որ ծովեզերքի երկայնքին վրայ երկու մղոն տարածութիւն ունի, իսկ դէպ 'ի ցամաքը շատ տարածուած չէ. ետևի կողմը 100էն ինչուան 150 ոտնաչափ բարձրութեամբ բլուրներ կան ։ Երևելի շէնքերն են քաղաքապետին պալատը, դատաստանարանը, բանտը, մաքսատունը, քարոզչաց մատուռը և դպրոցը ։

Սինկափուրը վաճառականութեան կողմանէ հարաւային Ասիոյ Լոնտրան կը սեպուի. բոլոր սահմանակից ազգերն ու Հնդկային Ովկիանոսի բնակիչները Սինկափուր կը թափեն իրենց բերքերն ու ձեռագործները, և հոնկէ կ'առնեն իրենց հարկաւոր եղած վաճառքները. վասն զի արևելեան ամէն վաճառքներն ալ կը գտնուին հոն, և գրեթէ Եւրոպայի վաճառականութեան հարստութէը հասած է ։ Աս ամէն յառաջդիմութեանց պատճառը ազատ նաւահանգիստ ըլլալն է ։ Անգղիացիք 1824ին երկու ինքնագլուխ իշխաններու ձեռքէ գրեթէ կէս միլիոն ֆրանքով գնեցին Սինկափուր կղզին, անոր հետ նաև բոլոր ան ծովերուն տիրած եղան ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊԻՆ օգուտները օրէ օր աւելի ճանչցուելով՝ մեծ քաջալերութիւն կ'ըլլայ մեզի որ առանց վհատելու ջանանք ոճը հետզհետէ լաւցընել ։ Ուրիշ մխիթարութիւն մըն ալ աս է մեզի, որ նաև մեր միաբաններէն դուրս գտնուող անձինք (որ ամէնքն ալ ազգային սիրոյն կապովը մեր եղբարքն են) հաւնելով Բազմավէպիս վախճանին, յօժար կամօք հաճեցան այլ և այլ օգտակար ու հետաքրքրական յօդուածներ խրկել մեզի, որ եթէ պատշաճ երևնայ՝ մէջը անցընենք ատենին ։ Թէպէտ այսպիսի բարեսէր անձանցմէ ոմանք չեն ուզեր որ յօդուածներուն տակը իրենց անունը նշանուի, բայց ուրիշները երբոր իրենք իրենցմէ չեն իմացըներ մեզի կամքերնին՝ հարկ կը համարինք անուննին ալ նշանակել յօդուածներուն տակը ։

Ասոնց մէջ գովեստով ու շնորհակալութեամբ յիշատակենք ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊՕՂՈՍ վարդապետը, որ իրեն սրամիտ ու գիտող և ուսումնասէր հանճարովը Հայաստանի ու փոքր Ասիայի շատ կողմերը երկար ատեն պտըտեր է, ու տեղեկացած և անձամբ փորձած օգտակար գիտելիքները գիր անցուցեր ու մեզի կը խրկէ որ աս օրագրով հաղորդենք մեր ազգին ։ Իրենն է ահա հետագայ յօդուածը. ըստ ժամանակին կը դնենք նաև ուրիշ յօդուածները՝ նոյնպէս Պ. Պ ստորագրութեամբ՝ որպէս զի որոշուին ուրիշներուն փորձած կամ պատմած գիւտերէն. և կը յուսանք որ կարդացողներն ալ սիրով ու երախտագիտութեամբ ընդունին ։